ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ -3- Ա-4041

«26» մայիսի 2021թ.

«Ֆոտոն» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ն. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Սույնով տեղեկացվում է, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/02» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգով Դատական դեպարտամենտի կարիքների համար ուղղահայաց շերտավարագույրների ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտում արձանագրվել է հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ն (Հավելված 1)-ում նշել է, որ հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ, սակայն այն հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ և ՍՊԸ-ի անվանումը չի լրացրել ռուսերեն լեզվով, իսկ (Հավելված 1.1)-ը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացակայում է կնիքը, ինչպես նաև տվյալ ընթացակարգի ծածկագիրը:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 41-րդ կետով՝ առաջարկվում է Ձեզ մինչև սույն թվականի մայիսի 27-ը ներառյալ շտկել վերոնշյալ անհամապատասխանությունը:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու դեպքում Ձեր հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ՝

ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատ՝. ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/02 ծածկագրով
գնումը համակարգող՝ Դ. Թովմասյան
Հեռ.՝ 511-788, 511-792